

ՀՈԶԱԿԱԳԻՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ՆԱԽԱԲԱՆ

Միրելի հայրենակիցներ, աշխարհի յառաջադեմ մարդկություն, բնիկ ժողովուրդներ, Հայոց ցեղասպանությունն վերապրած յաջորդող սերունդներու համար հիմնականատակ եղած էր հայապահպանումը, եւ որ վեց տասնամեակ յետոյ միայն հայ կեանքը արտերկրի մէջ վերապրեցաւ եւ կանոնագրեց իր գոյութիւնը:

Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու գոյութիւնը անգամ մը եւս հաստատեց այն իրողութիւնը, որ հայ ազգը, ենթակայ է ոչնչացման վտանգին այնքան ժամանակ, որքան որ չէ զսպած եւ սահմանափակած իր նկատմամբ ոչ քաղաքակիրթ քաղաքականութիւն վարողի ախորժակը:

Հայ ժողովուրդը, ընդհանրապէս, եւ Արեւմտեան Հայաստանի հայերը մասնաւորապէս, կը գտնուին քաղաքական սադրանքներու սպառնալիքի տակ, որոնց դէմ մարտնչելու լաւագոյն զինամթերքը մեր մարդկային, գիտական, զինական եւ դիւանագիտական բաժրորակարողութիւններն են:

Աշխարհաքաղաքական ու միջազգային իրադարձութիւններու փոփոխութիւնները դրականօրէն կը նպաստեն հայկական ներազգային կեանքի մէջ նորանոր յառաջդիմական որակներու ձեւաւորումով:

Հիմնուելով համաշխարհայնացման դրական եւ բացասական դրոյթներու վրայ, Արեւմտեան Հայաստանի Հայերու Համագումարը 2004 թուականէն ի վեր Ազգային Խորհուրդի հովանաւորութեան ներքոյ, իբրեւ գործադիր մարմին, յանձնառու է Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու ամբողջական վերահաստատման համար, թէ՛ հողային եւ թէ՛ մարդկային առումով:

2 Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը աշխարհասփիւռ հայութեան մէջ գործող միակ ղեկավարութիւնն է, որ իրաւական ու ռազմավարական առումով նոր ուղեգիծ կ'որդեգրէ հայոց զերագոյն նպատակը իրականացնելու: Նոր ուղեգիծը այն կողմնացոյցն է, որու հիմամբ Արեւմտեան Հայաստանի հայոց կարգավիճակը կը գատորոշուի այսօրուայ թոյլ իրադրութենէն եւ որու շուրջ համախմբուելով վերջնականապէս պիտի լուծենք մինչեւ օրս չլուծուած հիմնախնդիրը:

Ուստի ձեր ուշադրութեան կը յանձնենք Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Հռչակագիրը, որտեղ յստակօրէն բնութագրուած է հայոց նոր վահանը:

Վերջ նախաբանի:

4:Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Արեւմտեան Հայաստանի վտարանդի Կառավարութիւն կազմելու մասին հռչակագիրը-04-02-2011թ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդը՝ արտայայտելով Արեւմտեան Հայաստանի հայոց կամքը ու գիտակցելով իր պատասխանատւութեան խիստ կարեւորութիւնը իր ժողովուրդին հանդէպ, զոր կ'առնչուի անոնց իղձերու իրականացման եւ խեղաթիւրուած արդարութեան վերականգնման գործընթացին, հանդէս կու գայ հրապարակելու հետեւեալ որոշումը՝ յենուելով միջազգային հետեւեալ հանգամանքներուն

վրայ.

ա) ՄԱԿ-ի մարդու իրաւանց համընդհանուր սկզբունքներուն

բ) միջազգային իրաւունքի հանրաձանօթ չափանիշներուն

գ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի կիրառման անհրաժեշտութեան, որ պահանջուած է Ազգային Խորհուրդին կողմէ 2004 թ. դեկտեմբեր 17-ին

## ԿԸ ՀՌՉԱԿԷ

Աշխարհասփիւռ հայութեան լիիրաւ պետական կառոյցի մը ստեղծումը, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութեան սկիզբը:

Սոյն կառավարութեան ձեւաւորման երաշխիքները հաստատուած են իրաւական հետեւեալ որոշումներով.

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1.29 Դեկտեմբեր 1917 թ. (11 Յունուար 1918 թ.) Ռուսաստանի հրամանագիրը, որ կը ճանչնայ Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը. Ռուսիոյ Ժողովրդական պատուիրակներու Խորհուրդը լոյս կ'ընծայէ «Թրքահայաստանի վերաբերող հրամանագիրը» 1917 թ. Դեկտեմբեր 31-ին (1918 թ. Յունուար 13) «Բրաւտայի» թիւ 227-ի մէջ:

2. 2 Յունուար 1918 թ. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի դիմումը՝ ներկայացուած ֆրանսական կառավարութեան ճանչնալու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը:

3. 10 Օգոստոս 1920 թ. Սեւրի դաշնագիրը եւ ԱՄՆ նախագահ Ու. Ուիլսոնի իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր 1920 թ.) եւ մինչեւ օրս վաւերական ու իրենց իրաւաբանական ոյժը չկորսնցուցած միջազգային փաստաթուղթերու տը իւրէ (De jure) եւ տը ֆաքթօ (De facto) գոյութիւնը Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ: Կը նշենք հետեւեալ կարեւոր ամսաթիւերը. 1920 թ. Սան Ռեմոյի խորհրդածողով, 1920 թ. Ապրիլ 24, Սեւրի դաշնագրի ստորագրումը արեւմտեան գերտէրութիւններու կողմէ, 1920 թ. Մայիս 11, Սեւրի դաշնագրի յանձնումը թրքական կառավարութեան, 1920 թ. Օգոստոս 10, Սեւրի դաշնագրի ստորագրումը Թուրքիոյ կողմէ: 1960 թ. Դեկտեմբեր 14,

4. 14 Դեկտեմբեր 1960, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի Որոշումը Գաղութային ժողովուրդներու եւ երկիրներու անկախութեան արտօնութեան յայտարարութեան հիմամբ:

5. Արեւմտեան Հայաստանի հայերը իբրեւ բնիկ ժողովուրդ իրենց ինքնորոշման իրաւունքի տէրն են՝ համաձայն ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի կողմէ ընդունուած Յայտարարութեան 2007 թ. Սեպտեմբեր 13-ին:

«Բնիկ ժողովուրդները ինքնորոշման իրաւունք ունին, որուն հիման վրայ անոնք ազատօրէն կ'որոշեն իրենց քաղաքական կարգավիճակը, եւ ազատօրէն կ'ապահովեն իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային բարգաւաճումը» (Յօդ. 3):

## ՅՕԴՈՒՎԾ ԵՐԿՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի հայոց իրաւունքներու ապահովումն ու իրականացումը կարելի է միայն Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հովանաւորութեամբ:
2. Ամէն արտորուած հայու շառաւիղի իրաւունքն է վերադառնալու իր պապենական հայրենիքը ու բարգաւաճելու այդտեղ:
3. Հայ Ազգային Խորհուրդը կը հրաւիրէ արտաքին աշխարհի ուշադրութիւնը՝ մասնակցելու Արեւմտեան Հայաստանի պատմական տարածքներու ճանաչման իր նահանգներով (վիլայէթներով)՝ ներառեալ ուիլսընեան սահմանները եւ ընդունելու զայն իբրեւ անհերքելի իրողութիւն:
4. 1894-1923թ թ. թրքական յաջորդական իշխանութիւններու կողմէն Անատոլիայի եւ Արեւմտեան Հայաստանի մէջ գործադրած ցեղասպանութեան հետեւանքով ոչնչացուած եւ իւրացուած են բռնութեամբ արտորուած հայերու գոյքերը, որոնց համար կը պահանջուի վերադարձնել Արեւմտեան Հայաստանի կառավարութեան՝ իբրեւ միակ հեղինակաւոր իշխանութիւն:

## ՅՕԴՈՒՎԾ ԵՐՐՈՐԴ

Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութիւնը տարագիր հայոց կարգավիճակի ծնունդն է: Ուստի, հարկ է նկատի ունենալ հետեւեալ սահմանումները.

1. Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութիւնը կը կազմուի Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի պատգամաւորներուն կողմէ: Վտարանդի կառավարութիւնը օժտուած է նաեւ պետական իշխանութեան գերակայութեամբ եւ լիազօրութեամբ:
2. Արեւմտեան Հայաստանի հայոց անունով հանդէս գալու իրաւունքը կը պատկանի բացառապէս Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան:
3. Աշխարհասփիւռ հայութիւնը Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութեան իրաւունք ունի: Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները կը գտնուին անոր պաշտպանութեան եւ հովանաւորութեան ներքոյ:
4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կ'ապահովէ իր քաղաքացիներու ազատ եւ իրաւահաւասար զարգացումը՝ անկախ անոնց ազգային, ցեղային եւ դասանական պատկանելիութենէն:
5. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը հանրային անվտանգութեան պահպանման համար կը ստեղծէ համապատասխան մարմիններ եւ կառավարական կառոյցներ:
6. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը, իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայ, անմիջական յարաբերութիւններ կը հաստատէ այլ պետութիւններու եւ ազգային պետական կազմաւորումներու հետ, կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունէութիւններուն:

## ՅՕԴՈՒՎԾ ՉՈՐՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը կը յանձնարարէ Արեւմտեան Հայաստանի կառավարութեան՝ միջազգային յայտարարութիւններու եւ պայմանագրերու ընդունման միջոցով հաստատել, որ.

ա) Արեւմտեան Հայաստանի հարստութիւնը՝ հողը, ընդերքը, օդային տարածութիւնը, ջրային եւ այլ բնական պաշարները, տնտեսական, մտաւոր եւ պատմամշակութային կարողութիւնները, Արեւմտեան Հայաստանի հայերու սեփականութիւնն են:

բ) Արեւմտեան Հայաստանի հարստութեան տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը կ'որոշուի Արեւմտեան Հայաստանի կառավարութեան օրէնքներով:

գ) Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան մէջ նաեւ ունի ազգային հարստութիւն, որոնց կարգին ոսկիի պաշարներու, ադամանդի եւ արտարժոյթի հիմնադրամներու մասնաբաժինի իրաւունք:

2. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը իր տիրապետութեան տակ գտնուելիք ամբողջ տարածքին վրայ պիտի ապահովէ խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւն, օրէնսդրական, դատական եւ գործադիր իշխանութիւններու իրաւահաստատութիւն, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ տեղակայուելիք իրաւապահ մարմիններու եւ զինեալ ոյժերու ապաքաղաքականացում:

3. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը հռչակէ հայերէնը իբրեւ պետական լեզու, ընդունելով արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի համագործակցութեամբ, կառավարութեան պաշտօնական գրագրութեան լեզուն կը յայտարարէ արեւմտահայերէնը: Կառավարութիւնը կը ստեղծէ կրթական, գիտական եւ մշակութային սեփական համակարգ:

4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը սատարէ Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ կատարուած ցեղասպանութեան ճանաչման գործին՝ համաձայն Հայ Ազգային Խորհուրդի յայտարարութեան:

5. Մոյն Հռչակագիրը հիմք կը ծառայէ Ազգային Խորհուրդի համար՝ ժամանակաւորապէս նշանակելու եւ հաստատելու Արեւմտեան Հայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչ մը միջազգային կառոյցներու մէջ՝ որոշում կայացնելու իրաւունքով: Ուստի, կոչ կ'ընենք ձեզ, հայեր, Արեւմտեան Հայաստանի, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, Չաւախքի, եւ թէ՛ աշխարհով մէկ սփռուած, մասնակցիլ կառավարութեան գործունէութեանց՝ ձեր գիտելիքներով, փորձառութիւններով եւ մասնագիտութիւններով:

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդ Փարիզ, 4 Փետրուար, 2011 թ.